# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N «ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/2»

ք. Երևան «28» 12 2020 թ.

Սոցիալական ապահովության ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Հ. Գևորգյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Շահբազյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 7740000 (յոթ միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով, համաձայնագրով հաստատված վճարման ժամանակացույցով սահմանված պայմաններով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից

համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Սոցիալական ապահովության ծառայություն | «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ 02505511 | ք. Երևան, Երվանդ Քոչար 23/64, հեռ. |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական | +374 44 883366 |
| վարչություն | ՀՎՀՀ 02677364 |
| Հ/Հ 900011556652 | Ամերիաբանկ ՓԲԸ |
| | Հ/Հ 1570063238750100 |
| | Տնօրեն՝ Դ. Շահբազյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
«28» 12 2020թ. կնքված
«ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ | | | | | | Մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը |
| 1 | 72261160/501 | **Նախաբան**<br>Նախագծի շահառու կողմ է հանդիսանում Սոցիալական ապահովության ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), որը աշխատանքների արդյունավետության բարձրացման, որոշումների կայացման գործընթացի բարելավման և ծառայությունների մատուցման արդյունքում պետք է իրականացնի Ծառայության տեղեկատվական ներքին պորտալի (այսուհետ՝ Պորտալի) և «Հայաստանի ազգային արխիվ» համակարգի հետագա արտադրական շահագործումը:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի **«Պետական կենսաթոշակների մասին»** Հայաստանի Հանրապետության **օրենքի կիրարկումն ապահովելու մասին N 665-Ն որոշման համաձայն**՝ կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու կամ այլ դեպքերի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտով սահմանված արխիվային տեղեկանքներ կամ արխիվային տվյալներ (տեղեկություններ) պարունակող այլ փաստաթղթեր քաղաքացիների կողմից չներկայացնելու դեպքում արխիվային փաստաթուղթը «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից ստանում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ համապատասխան հարցում կատարելու միջոցով:<br>Ի կատարումն 2014 թվականի հունվարի 30-ի ՀՀ կառավարության նիստի արձանագրության 24-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում արխիվային գործի բարեփոխումների իրականացման հայեցակարգի» 30-րդ կետի 3-րդ ենթակետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին N 665-Ն որոշման դրույթների ԱՄՆ ՄԶԳ կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագրի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համագործակցության շրջանակներում մշակվել և ներդրվել է «Հայաստանի ազգային արխիվ» տեղեկատվական համակարգը, որը հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային եղանակով իրականացնել տեղեկատվության փոխանակում Ծառայության և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի | դրամ | 7740000 | 1 | Ք.Երևան, Նալբանդ-յան 13 | Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման դեպքում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 365-րդ օրացուցային օրը ներառյալ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | միջև:<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2013 թվականից Ծառայությունում շահագործվում է Պորտալը, որից օգտվում են 520 աշխատակիցներ և «Հայաստանի ազգային արխիվ» տեղեկատվական համակարգի աշխատանքը սերտ կապված է Պորտալի հետ, ինչպես նաև հիմնական տարբերակների շահագործմանը զուգահեռ լուծվում են շահագործման ընթացքում ի հայտ եկած խնդիրները, բարելավվում և արդիականացվում են համակարգերի ենթաբաժիններն ապահովող առկա գործիքները, ապա անհրաժեշտություն է առաջացել դիտարկել այս երկու համակարգերը, որպես մեկ ամբողջություն:<br>**Անհրաժեշտությունը**<br>Պորտալը և «Հայաստանի ազգային արխիվ» տեղեկատվական համակարգը շահագործվում են Ծառայության աջակցող և հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում: «Հայաստանի ազգային արխիվ» տեղեկատվական համակարգը շահագործվում է նաև «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից:<br>Ներկայումս Ծառայությունում օգտվողների համար շահագործվող Պորտալը հանդիսանում է տեղեկատվության հասանելիության միասնական օղակ: Պորտալը հանդիսանում է հստակ մոդուլավորված և ստանդարտիզացված գործիք, որը օժտված է արտաքին համակարգերի հետ ինտեգրվելու և հաղորդակցվելու հնարավորությամբ: Այն հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային եղանակով հասանելիություն ստանալ պահանջվող տեղեկատվությանը, ինչը թույլ է տալիս իրականացնել ճկուն կառավարում և գործընթացների վերահսկողություն: Պորտալը միավորվելով առկա և նոր մոդուլներին, ինչպես նաև ծրագրային այլ լուծումներին ապահովում է վեբ հասանելիություն պահանջվող տեղեկատվությանը և տեղեկատվական պահոցներին:<br>Պորտալի բաժիններն են՝<br>• Անձնական տվյալներ.<br>• Կայքի կառավարում.<br>• Հայտարարությունների անկյուն.<br>• Հեռախոսագիրք և Էլ.փոստի տեղեկատու.<br>• Հաղորդագրությունների կառավարում.<br>• Մարդկային ռեսուրսների կառավարում.<br>• Նամակագրության առցանց վերահսկում.<br>• Տեղեկանքների տրամադրում.<br>• Փոխադրամիջոցների հայտերի կառավարում.<br>• Օժանդակման կենտրոն.<br>• Ժամանակի կառավարում.<br>• Բիզնես գործընթացների կառավարում.<br>• Հաշվետվությունների կառավարում.<br>• Մատակարարման շղթայի կառավարում.<br>• Որոշումների կայացման աջակցման կառավարում.<br>• «Նպաստ» համակարգի կառավարում:<br>«Հայաստանի ազգային արխիվ» տեղեկատվական համակարգը, որը շահագործվում է 2017 թվականի հունվարի 1-ից բաղկացած է երկու՝ Ծառայության և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի հատվածներից: Համակարգի երկու հատվածներն նախագծված են և | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | աշխատամում են համաձայն Ծառայության և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի իրավունքների և պարտականությունների:<br>**Նպատակը**<br>Սույն տեխնիկական բնութագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել Պորտալի և «Հայաստանի ազգային արխիվ» համակարգի (այսուհետ՝ Համակարգեր) հիմնական տարբերակների շահագործումը, շահագործման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծումը և Համակարգերի հիմնական տարբերակների սպասարկման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման աշխատանքների իրականացումը:<br>**Համակարգերի սպասարկման աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջները**<br>Սպասարկման ծառայություն մատուցող ընկերությունը (այսուհետ՝ Կատարող) Համակարգերի սպասարկման աշխատանքները պետք է իրականացնի՝<br>1. համաձայն 5x7 (շաբաթական 5 օր, 7 ժամ) սկզբունքի,<br>2. համաձայն Պորտալի Օժանդակման կենտրոն բաժնի «Փոփոխության հայտ» ենթաբաժնում հաշվառված ժամկետների և առաջնահերթությունների: Ընդ որում՝ բոլոր աշխատանքների առաջնահերթությունների համար սահմանվում են հետևյալ ժամկետները՝<br>1. «Հրատապ»-2 օր<br>2. «Բարձր»-3 օր<br>3. «Միջին»-10 օր<br>4. «Ցածր»-15 օր<br>Կատարողը Համակարգերի սպասարկման աշխատանքները համակարգելու և իրականացնելու նպատակով պետք է հատկացնի ներկայացուցիչ՝ սպասարկման համակարգող, գրավոր տրամադրելով Ծառայությանը նրա անունը, ազգանունը, հայրանունը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը:<br>Սպասարկման համակարգողը պետք է՝<br>• Համակարգերի շահագործման ընթացքում առաջացած տեխնիկական հարցերի վերաբերյալ տրամադրի խորհրդատվություն (հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով).<br>• Իրականացնի Համակարգերի շահագործման ընթացքում առաջացած և փոփոխության հայտերի միջոցով ուղարկված տեխնիկական խնդիրների լուծումը.<br>• Իրականացնի այլ աշխատանքներ կապված Համակարգերի անխափան աշխատանքի ապահովման հետ:<br>**Աշխատանքների ներկայացում**<br>Ծառայության համապատասխան վարչությունը ի հայտ եկած խնդիրների, Համակարգերում չնախատեսված անհրաժեշտ փոփոխությունների և առկա Համակարգերի հիմնական տարբերակների սպասարկման համար նախատեսվող աշխատանքները հաշվառում է Պորտալի Օժանդակման կենտրոն բաժնի «Փոփոխության հայտ» ենթաբաժնում, որը հնարավորություն է ընձեռում ինքնաշխատ եղանակով այն փոխանցել (ուղարկել) Կատարողի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով՝ հաշվառված աշխատանքի կատարումն ապահովելու նպատակով: «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից առաջադրվող խնդիրները, առաջարկները և անհրաժեշտ փոփոխությունները գրավոր կարգով | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ներկայացվում են Ծառայություն՝ Պորտալի Օժանդակման կենտրոն բաժնի «Փոփոխության հայտ» ենթաբաժնում հաշվառելու նպատակով, իսկ անհրաժեշտության դեպքում Կատարողին:<br>**Աշխատանքների իրականացում**<br>Կատարողը, իրականացվող աշխատանքների շրջանակում պետք է ապահովի Համակարգի անխափան աշխատանքը՝ հետևյալ գործառույթներով.<br>1. Տեղեկատվության պահպանման անվտանգության և գաղտնիության սկզբունքների ապահովում:<br>2. Տվյալների բազաների պատճենահանում (database backup), վթարների դեպքում վերականգնում:<br>3. Այլ գերատեսչություններից և սոցիալական ոլորտում առկա տեղեկատվական շտեմարաններից ստացված տվյալների հասանելիության ապահովում:<br>4. Համակարգերի շահառուների սպասարկման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ծրագրային միջոցների կիրարկման ապահովում, մասնավորապես քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների և կից ներկայացված փաստաթղթերի հաշվառման ապահովում և պատասխանի տրամադրում Ծառայության տարածքային ստորաբաժանումներում անկախ քաղաքացու հաշվառման հասցեից:<br>5. Նոր օրենքների, օրենսդրական ակտերի և ՀՀ կառավարության որոշումների ի հայտ գալու պարագայում առկա Համակարգերի ծրագրային ապահովության մեջ փոփոխությունների կատարում՝ համաձայն Պատվիրատուի կողմից հաշվառված ժամկետների և առաջնահերթությունների:<br>6. Համակարգերի աշխատանքի ընթացքում առաջացող՝ անհետաձգելի շտկում պահանջող ծրագրային թերությունների և բացթողումների շտկում շուրջօրյա ռեժիմով (7 օր/24 ժամ), այդ թվում՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին (ծրագրային թերությունը և բացթողումը անհետաձգելի է համարում Պատվիրատուն):<br>7. Համակարգերի արագագործության հետ կապված խնդիրների լուծում:<br>8. Ծառայության կողմից ներկայացված Պորտալի անհրաժեշտ ենթաբաժինների լրամշակում, անհրաժեշտության դեպքում նոր բաժինների (ենթաբաժինների) ստեղծում:<br>9. Ծառայության և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված «Հայաստանի ազգային արխիվ» համակարգի անհրաժեշտ ենթաբաժինների լրամշակում, անհրաժեշտության դեպքում նոր բաժինների (ենթաբաժինների) ստեղծում:<br>10. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից առաջադրված խնդիրների լուծում, «Հայաստանի ազգային արխիվ» համակարգի շահագործման ընթացքում առաջացած տեխնիկական հարցերի խորհրդատվության տրամադրում (հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով) «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի մասնագետներին:<br>11. Ծառայության պահանջով Համակարգերի տվյալների շտեմարաններից հաշվետվությունների ստացում և անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում:<br>12. Համակարգերի ծրագրային ապահովության մեջ փոփոխությունների կատարում և շտեմարանի լրամշակում:<br>Համակարգերի աշխատանքի ընթացքում առաջացող ծրագրային թերությունները և բացթողումները շտկելու, օրենսդրական փոփոխությունների հիման վրա Համակարգերի | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ծրագրային ապահովության մեջ փոփոխություններ կատարելու (լրամշակելու) աշխատանքներն իրականացվում են հետևյալ ընթացակարգով.<br>• Պատվիրատուն Պորտալի Օժանդակման կենտրոն բաժնի «Փոփոխության հայտ» ենթաբաժնում հաշվառում է առաջադրանքը՝ նշելով առաջնահերթությունը,<br>• Կատարողը, ըստ անհրաժեշտության, առաջադրանքը քննարկում է Պատվիրատուի հետ՝ (եթե ծրագրային փոփոխության կամ լրամշակման առաջարկը ստացել է Պատվիրատուի կողմից) գրավոր կամ բանավոր կարգով պարզաբանումներ ստանալով առաջադրանքի բովանդակության վերաբերյալ,<br>• Կատարողը, ըստ անհրաժեշտության, առաջադրանքը քննարկում է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի հետ՝ (եթե ծրագրային փոփոխության կամ լրամշակման առաջարկը ստացել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից) գրավոր կամ բանավոր կարգով պարզաբանումներ ստանալով առաջադրանքի բովանդակության վերաբերյալ,<br>• առաջադրանքի բովանդակության հստակեցումից հետո Պատվիրատուն (անհրաժեշտության դեպքում նաև «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ը) և Կատարողը փոխհամաձայնեցնում են աշխատանքի ավարտի ժամկետները՝ հաշվի առնելով առաջադրանքի առաջնահերթությունը,<br>• ծրագրային փոփոխությունները նախ թեստավորում է Կատարողը, որից հետո այն տեղադրվում է թեստային միջավայրում՝ Պատվիրատուի և (կամ) «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից թեստավորման նպատակով,<br>• Պատվիրատուի և (կամ) «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի համաձայնության դեպքում Կատարողի կողմից ծրագրային փոփոխությունները տեղադրվում է հիմնական միջավայրում:<br>13. Պատվիրատուի պահանջով՝ Համակարգերում կատարված գործողությունների (գործառնությունների) վերծանումների տրամադրում Պատվիրատուին:<br>14. Կատարողը կազմակերպում է Համակարգի շահագործող մասնագետների ուսուցում՝ ըստ պահանջի և անհրաժեշտության:<br>15. Կատարողը ապահովում է Համակարգի օգտվողի ձեռնարկի և Համակարգի տեխնիկական այլ փաստաթղթերի թարմացում (լրամշակում)՝ համաձայն կատարված փոփոխությունների:<br>Վերը նշված աշխատանքների ապահովումը, ծրագրային սպասարկումը և նախատեսվող բոլոր փոփոխությունների իրականացումը Կատարողի կողմից պետք է ապահովվի 2021 թվականի հունվարի 1-ից:<br>**Իրականացված աշխատանքների ընդունում**<br>Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ Կատարողը Ծառայություն է ներկայացնում հաշվետվություն՝ ուղեկցող նամակով, և տվյալ ամսվա ընթացքում ստացված արդյունքներով (անհրաժեշտության դեպքում նաև արտաքին կրիչով), իսկ առնչվող փաստաթղթերը՝ թղթային տարբերակներով:<br>**Տեխնիկական տվյալներ**<br>Գնման առարկան վերաբերվում է արդեն իսկ առկա գործող համակարգերին, ինչպես նաև նոր գործիքակազմի ստեղծմանը և ներդրմանը՝ կապված օրենսդրական ակտերի | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | փոփոխության կամ նոր իրավական ակտերի ընդունման հետ:<br>Գործող Համակարգի շահագործման պարամետրեր են՝<br>• Օպերացիոն համակարգ – x86_64-suse-linux-gnu;<br>• Տեղեկատվական շտեմարանի կառավարման համակարգ - PostgreSQL 9.1.9, mysql 5.6.34;<br>• Ծրագրավորման լեզուն - PHP 5.3.15, PHP 5.6.34, yii1, yii2, mantis, zend2;<br>• Մեթոդաբանություն - Client/ Server;<br>• Համացանց սերվեր (web server) - Apache 2.4, Tomcat 7;<br>• Տվյալների փոխանցման "protocol" (Data transfer protocol) – HTTPS:<br>Անհրաժեշտությունից ելնելով Պատվիրատուի պահանջով կարող են փոխվել վերընշված տեխնիկական պարամետրերի տարբերակները: | | | | | |
| Այլ պայմաններ | | Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածը Ծառայությունը և Կատարողը սահմանում են, որ իրենց միջև կնքվող պայմանագրի (համաձայնագրի) պայմանները կիրառվում են 2021 թվականի հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Սոցիալական ապահովության ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556652

---

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Երվանդ Քոչար 23/64, հեռ. +374 44 883366
ՀՎՀՀ 02677364
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570063238750100
Տնօրեն՝ Դ. Շահբազյան

---

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«28» 12 2020 թ. կնքված
«ՍԱՏ ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 2.1*
*«28» 12 2019 թ. կնքված*
*«ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/2» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**2020թ. դեկտեմբերի 28-ին կնքված N ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/2 գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան «10» «07» 2021թ.

Սոցիալական ապահովության ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Հ. Գևորգյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Շահբազյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 28.12.2020թ. կնքված N ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/2 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 1-ի:

1.2 Պայմանագրի 4.2 կետը հաստատել նոր հետևյալ խմբագրությամբ. «Պատվիրատուն իրեն [illegible]ված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի [illegible]արկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-[illegible]ան արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 1) [illegible]խատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:»

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների կատարման Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: [illegible]նություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

[illegible] Սույն Համաձայնագիրը կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, [illegible]ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Սոցիալական ապահովության ծառայություն | «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ 02505511 | ք. Երևան, Երվանդ Քոչար 23/64, |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | հեռ. +374 44 883366 |
| Հ/Հ 900011556652 | ՀՎՀՀ 02677364 |
| | Ամերիաբանկ ՓԲԸ |
| | Հ/Հ 1570063238750100 |
| | Տնօրեն՝ Դ. Շահբազյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 1
« 28 » «դեկտեմբերի» 2020թ. կնքված
N ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/2 գնման պայմանագրի հիման վրա
«...10...» «...02...» 2021թ. կնքված համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | ԸՆԴԱՄԵՆԸ |
| 1 | 72261160/501 | ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ | 1290258 | 1290258 | 1290258 | 3225258 | 3225258 | 3225258 | 5160258 | 5160258 | 5160258 | 7740000 | 7740000 | 7740000 | 7740000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Սոցիալական ապահովության ծառայություն
ք. Երևան, Նալբանդյան 13
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556652

---
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Երվանդ Քոչար 23/64,
հեռ. +374 44 883366
ՀՎՀՀ 02677364
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570063238750100
Տնօրեն՝ Դ. Շահբազյան

---
(ստորագրություն)

Կ.Տ.